ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք.Իջևան 06.08.2021թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ, ՀՎՀՀ 00138021, ի դեմս նախագահ Վահագն Համբարձումյանի, այսուհետ՝ **Կազմակերպություն**, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ Իջևանի մասնաճյուղը, ՀՎՀՀ 01506928, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Անուշավան Մակարյանի, այսուհետ՝ **Մասնաճյուղ**, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ համատեղ հիշատակվելուց՝ **Կողմեր**, կարևորելով գործընկերության և համագործակցության դերը ուսանողների կրթության, մասնագիտացման ոլորտում և գործարար մակարդակում դրանց կիրառման գործընթացներում՝ կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին:

1. Հուշագրի առարկան

1.1. Սույն հուշագրով **Կողմերը** համաձայնվում և պայմանավորվում են, որ.

1.1.1. Կրթական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացում **Մասնաճյուղը** ըստ նպատակահարմարության իր մասնագետների հետ համատեղ ներգրավում է նաև **Կազմակերպության** փորձառու աշխատողների և անդամների:

1.1.2. **Մասնաճյուղի** կողմից ուղեգրման դեպքում կրթական ծրագրով ուսանողների ուսումնաարտադրական և գիտահետազոտական պրակտիկաները կազմակերպվում և անցկացվում են **Կազմակերպությունում**:

1.1.3. **Մասնաճյուղը** ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում ներգրավում է **Կազմակերպության** կողմից առաջադրված համապատասխան մասնագետների:

1.1.4. **Մասնաճյուղը Կազմակերպության** աշխատակիցներին և անդամներին հրավիրում է իր կողմից տարբեր հարթակներում և ակումբներում կազմակերպվող բաց դասերին, սեմինարներին և քննարկումներին:

1.1.5. **Կազմակերպությունը Մասնաճյուղի** ուսանողներին և պրոֆեսորադասախոսական կազմին հրավիրում է իր կողմից տարբեր հարթակներում և ակումբներում կազմակերպվող բաց դասերին, սեմինարներին և քննարկումներին:

1.1.6. Համատեղ կազմակերպում և անցկացնում են բաց դասեր, սեմինարներ և մասնագիտական քննարկումներ:

1.1.7. Համատեղ հրատարակում են ուսումնամեթոդական նյութեր:

1.1.8. **Կազմակերպությունը** ուսանողների համար կազմակերպում է հանդիպումներ բիզնեսի տարբեր ոլորտներում կայացած հաջողակ գործարարների հետ, իրենց անձնական փորձը ուսանողներին ներկայացնելու նպատակով:

1.1.9. **Կազմակերպությունը** թեստավորման և հարցազրույցների արդյունքում լավագույն ուսանողներին ապահովում է աշխատանքով՝ իր մոտ կամ իր աջակցությամբ՝ գործընկերների մոտ:

1.1.10. **Կազմակերպությունը** կարող է իր կամ գործընկերների միջոցով աջակցություն ցուցաբերել ուսանողներին՝ ուսման վարձի փոխհատուցման, կրթաթոշակների և այլ ձևերով:

1.2. **Կազմակերպությունը** և **Մասնաճյուղը** նպատակահարմար են գտնում մշտապես քննարկել և մշակել համագործակցության առավել արդյունավետ այլ ձևաչափեր՝ կրթական ծրագրերի կատարելագործման և գործարար մակարդակում դրանց կիրառման նպատակով:

2. Հուշագրի գործողության ժամկետը

2.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում 06.08.2021թ.-ից և գործում է անժամկետ:

2.2. Հուշագիրը կարող է լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս կողմին նախօրոք գրավոր ձևով պատշաճ ծանուցելով: Այս դեպքում ծանուցագրում նշված օրվանից Հուշագիրը համարվում է լուծված:

3. Այլ պայմաններ

3.1. Հուշագիրը կազմված և ստորագրված է երկու օրինակներից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է **Կազմակերպության**, իսկ մյուսը՝ **Մասնաճյուղի** մոտ:

4. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Կազմակերպություն	**Մասնաճյուղ**
ՀՀ, ք.Երևան, Արաբկիր ՎՇ, Վարդարշան 12	ՀՀ ՏՄ, ք.Իջևան, Ուսանողական 3
(հասցե)	(հասցե)
Կ.Տ.	Կ.Տ.
(ստորագրություն)	(ստորագրություն)